

8 Եւ այսպէս միաբանութեամբ արհամարհեալ զամենայն սնտոի մեծութիւն կենցաղոյս այսորիկ՝ առ ոչինչ համարեցան. այլ հանդերձ հաւանելովք<sup>1</sup> ընդ ինքեանս դրամբ եւ ընտանեալք դեմ եղեալ անցանել<sup>2</sup> ի կողմանս իշխանութեանն Յունաց ճեպէին, ուր եւ թագուցանել միաբանութեամբ եւ կամ աստ անդր<sup>3</sup> ցրուել<sup>4</sup> զանձինս կարասցեն: 9 Եւ եկեալ հասանէին ի գիւղ<sup>5</sup> մի, որոյ անունն էր Արամանայ, ի նահանգին Բագրաւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ եւ Տուարծատափու<sup>6</sup>. ուր եւ<sup>7</sup> սակաւ ինչ աւուրս կամեցեալ հանգչել, եւ զուշ եղեալ ճանապարհն գնալ պատրաստէին ստիպով:

10 Յանկարծակի իրազգաց եղեալ այսպիսի խորհրդոյ եւ գնացից յաշխարհեւ Յայոց՝ զմեծէ սպարապետէն Յայոց, զտեռնէն<sup>8</sup> Մամիկոնէից Վարդանայ, հանդերձ եղբարքք իւրովք, դրամբ եւ ամենայն ախիւ՝ իշխանին Սիւնեաց Վասակայ, որ եւ մարզպան էր Յայոց ի ժամանակին, եւ ամենայն տանուտերացն<sup>9</sup> Յայոց եւ սեպհացն՝ խորտակեալ սրտիւ զարհուրէին. զմտաւ ածեալ ամենեցուն, որք ի փրկութիւն անձանց իւրեանց ի խնդիր էին<sup>10</sup>, թէ արդ գիտեմք, զի կորեաք ի սպառ, եւ ոչ է հնար մեզ զերծանել ի չարեւ յայսմանէ մինչեւ ի սպառ: 11 Քանզի տեղեկացեալ ճանաչէին ամենեքեան, թէ առանց առաջնորդութեան ազգին այնորիկ եւ ոչ մի ինչ իրք եւ գործք աշխարհիս Յայոց երթեալ էին ի գլուխ: 12 Խորհուրդ ի մեջ առեալ իշխանին Սիւնեաց Վասակայ հանդերձ ամենայն տանուտերամբք Յայոց եւ աւագ սեպհաւք, եւ զմիտս ամենեցուն յիւր կամսն հաւանեցուցանէր, ասելով թէ «Պարտ է փութով զհետ զաւրավարին Յայոց Վարդանայ Մամիկոնէի քահանայս առաքել ընտիրս եւ արս աւագս ի տանուտերացս Յայոց, եւ աղաչանաւք դարձուցանել զնա այսրէն. զի առանց նորա մեր այս ամենայն կամք եւ խորհուրդք եւ ոչ մի ինչ վճարին»:

13 Եւ արարեալ նամակ իշխանին Սիւնեաց Վասակայ իւրով մատանեալ՝ հրամայէր նամականի առնել եւ այլ ամենայն աւագ տանուտերացն Յայոց, եւ կնքեալ զնամականին<sup>11</sup> իւրաբանչիւր ուրուք մատանեալ՝ տայր

1 ՁԱՄ. հաւանելով

2 ՏՏ. անցեալ

3 ՏՏ. աստ անդ. 2. աստ անտր

4 2. ցրուելով

5 2. այստեղ եւ յետոյ՝ ի գեաւղ

6 ՏՏ. տուարծատափայ

7 ՁԱՄ. որ եւ

8 Կամ ըստ 2. զտեռնէն

9 ԱՄ. տանուտերացն

10 ՏՏ. իւրեանց խնդրէին

11 ԱՄ. նամականին